# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Չարենցավանի № 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի /շաբաթական 10 դասաժամ/, ինֆորմատիկայի /շաբաթական 2 դասաժամ/, քիմիայի /շաբաթական 10 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար մասնակիցը տնօրենի կողմից նշանակված աշխատակցին է ներկայացնում

1. Դիմում(Ձև 1)՝ , մեկ լուսանկար՝ 3×4 չափի,
2. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ(դիպլոմ) (միջին մասնագիտական կրթություն ունեցող և կամավոր ատեստավորում անցած ուսուցչի կողմից դպրոցի թափուր տեղի մրցույթին մասնակցելու դեպքում՝ միջին մասնագիտական կրթության փաստաթուղթ)
3. Անձը հաստատող փաստաթուղթ
4. «Հանրակրթության մասին» ՀՀ Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան ՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում)
5. Ինքնակենսագրություն (Ձև 5)
6. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:
8. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում),
9. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
10. ՀՀ Կառավարության 2022թ. ապրիլի 28-ի N596-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն(մասնակցած լինելու դեպքում)
11. «Հանրակրթության մասին» ՀՀ Օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի (առկայության դեպքում նաև՝ 2-րդ կետի) պահանջվող համապատասխան փաստաթուղթ:
12. «Հանրակրթության մասին» ՀՀ Օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջին համապատասխան տեղեկանք՝ բարձրագույն ուսումնական հաստատությունից

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում 2025թ. հունիսի 13-ից մինչև 26-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10 $^{00}$-ից 15 $^{00}$-ը, բացի շաբաթ, կիրակի և տոնական օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

**Մրցույթը տեղի կունենա 2025թ հունիսի 27-ին՝ ժամը 11 $^{00}$-ին, ՀՀ Կոտայքի մարզի «Չարենցավանի № 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում՝ համայնք Չարենցավան, քաղաք Չարենցավան Ռուսովի փողոց 7 հասցեում:**

Տեղեկությունների համար զանգահարել (0226) 4-54 -98 հեռախոսահամարով: